զ) “Կատարող”-ը պատասխանատվություն է կրում իր մատուցած ծառայությունների ժամանակ “Պատվիրատու”–ին ոչ պատշաճ սպասարկման համար:

2.2 “Պատվիրատու”-ն պարտավոր է `

ա) վճարել մատուցված ծառայությունների համար՝ զբոսաշրջային փաթեթների կամ առանձին ծառայությունների հաշվարկված արժեքը ամբողջությամբ փոխանցելով “Կատարող”-ի հաշվարկային հաշվին ծառայության պայմանգրի ստորագրման պահից՝5 աշխատանքային օրվա ընթացքում :

բ) Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարման ենթակա ընդհանուր արժեքը կազմում է ----------(----------)ՀՀ դրամ , ներառյալ բոլոր տեսակի հարկերը :
Փաթեթում ներառված հյուրանոցային ծառայությունների արժեքի գինը կազմում է ----------(----------)ՀՀ դրամ:

դ)չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները հակառակ դեպքում պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոփոխությամբ :

3. ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

3.1 Պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ սպառողի կողմից պայմանագրով նաղատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում ` սպառողի նկատմամբ կիրառվող տուգանքի չափ է սահմանվում՝

ա. պայմանագրի գնի մինչև քսանհինգ տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ.

բ. պայմանագրի գնի մինչև հիսուն տոկոսի չափով , եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է սույն ենթակետի ա պարբերությամբ նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը զբոսաշրջային օպերատորին սպառողի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

4.1 <<Կատարող>>-ը իր պարտականությունների չկատարման համար պարտավորություն չի կրում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը և այլն: